

## ՀԱՍՏԵՐԱԿՈՒՄՆ ԽԱՆՈՒԹՅՈՒԲ

Ա. ՍԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Ես ասացի, որ առեգրական փորձնականութիւն ձեռք բերելու նպագակով ցանկալի է, որ սպառող ընկերութիւնը սեպհական խանութ բացանելուց առաջ իր անդամներին անհրաժեշտ պիտոյք ները գնէ մասնաւոր մթերավաճառից, վերջինիս հետ ձեռնպու պայմաններ կապելով։ Սակայն այդ միջոցը ամեն դեղ իրազործելի չէ։ Դա հնարաւոր է միայն քաղաքներում, ուր մրցում կայ և ուրիմն գների վերաբերմամբ զիջում կարելի է ստանալ։ Գիւղերում և մանր քաղաքներում այդ միջոցը անգործադրելի է, և ահա այսպիսի դեղերում ընկերութիւնը սեփական խանութով պիտի սկսէ իր գործը։

Եւ այսպէս ուրեմն մասնաւոր մթերավաճառների հետ մթերքների գների վերաբերմամբ համաձայնութիւն կայացնելով կամ սեփական խանութ հիմնելով՝ սպառող ընկերութիւնը նախապէս կամ անմիջապէս ծգտում է մատակարարել իր անդամներին էժան գնով, լաւ որակի եւ ուղիղ շափսի ու կշռի ապրանք։ Յեպոյ, երբ ընկերութիւնը մեծանում է, երբ նրա ծաւալը լայնանում է, նա, այդ նպարակից բացի, ծառայում է և այլ խնդիրների, որոնց մասին փոքր ինչ յեպոյ կը խօսեմ։ Իսկ առ այժմ ցոյց տամ, թէ ինչի

արդիւնք են հասարակական խանութները, ինչն է դրդել առանձին անհագների միանալ և այդպիսի ընկերութիւններ կազմել:

Այդ երեսով թի պատճառը հերեւեալն է. մանրավաճառութեամբ զբաղւելը որպէս գոյութեան միջոցի ամենահեշտ ձեւը, վերջին ժամանակներս շարերին է գրաւել, որի պատճառով և բաւականին բազմացել է մանր խանութների թիւը: Վերջիններիս բազմանալը նպաստում է վերաբեր ծախքերի (նակլածներ) աճման, իսկ այս հանգամանքը բարձրացնում է մթերքների գները: Կան և այլ հանգամանքներ, որոնք նոյնպէս նպաստել են մթերքների թանկանալուն. օրինակ, գիւղական խանութի մոնուպով դրութիւնը, այն հանգամանքը, որ մանրավաճառները կարողանում են գների չափսի մասին հեշտութեամբ համաձայնութիւններ կայացնել իրար մէջ և այդպիսով միշտ բարձր պահել գները: Մի խօսքով մանրավաճառութիւնը ստիպել է և սրիպում է հասարակութեան շար թանկ վճարել մանրավաճառների ծառայութեան համար և հէնց պարահում է, որ նոյց աշխարհում ապրանքների գները անասելի կերպով բարձրանում են: Սրեմուեան Եւրոպայում մանրավաճառների մօք ապրանքների գները քանակի (ՕՊՏՈՎԱՅ) գների հետ համեմարած, բարձրանում են  $30-127\%$ -ով: Ափսոս որ Եւուսաստանի և մասնաւորապէս Կովկասի մասին այդպիսի սրարթիստիկական տեղեկութիւններ չունինք: Կրանից արդէն հասկանալի է հետեւալը. Ֆրանսիան ընդհանուր առմամբ սպասում ապրանք 25 միլիարդ ֆրանկ, որից  $7\frac{1}{2}\%$  մգնում է մանրավաճառների գրավանը: Այդ թիւը ( $7\frac{1}{2}$  միլիարդ ֆրանկ) երկու անգամ մեծ է Ֆրանսիայի բիւշէից և  $1\frac{1}{2}$  անգամ—այն ահազին, պատմութեան մէջ չլսւած դուրքից, որ Ֆրանսիան սրիպւած եղաւ 1871 թւականին վճարել Գերմանիային: Մեզանում մանրավաճառութիւնը այդ գիւղակէտից անկասկած աւելի վառ է դրւած և իսկապէս հետաքրքիր է իմանալ, թէ արդեօք նրքան օգուտ ենք վճարում մեր մանրավաճառներին:

Եւ այդպէս մանրավաճառութեան մէջ գոյութիւն ունեցող մթերքների թանկութիւնը, բարձր գները յառաջ են բնրել սպառով ընկերութիւններ, որոնք ուղղակի յարաբերութիւններ հասպապելով խոշոր արդիւնաբերողների կամ քանակով վաճառողների (օպտովայ տորգուեց) հետ, աղափւում են մանրավաճառի թանկ

միջամբութիւնից և ծառայութիւնից և այդպիսով հնարաւորութիւն են փախս իրանց անդամներին կամ խնայողութիւններ անել և կամ հեշտութեամբ ընդարձակել իրանց սպառման կամ պահանջների շրջանը։

Սպառողների ընկերութիւնները ոչ միայն իրանց անդամների համար են էժանացնում մթերքները, այլ և ընդհանրապէս անուշղակի կերպով ազդում են գների վրայ, որովհետեւ հասարակական խանութը առևտուր է անում և կողմանակի անձերի հետ։ Այդպիսով նա սրիպում է մանրավաճառներին աչք չհեռացնել հասարակական խանութի գներից և վարել դոցա համաձայն։

Հասարակական խանութների ծագման նպաստում է և այն հանգամանքը, որ մանրավաճառները մեծ մասամբ վագր որպակի ապրանք են բաց թողնում իրանց գնորդներին։ Ո՞վ չդիմէ, որ շաբ խանութպաններ, ձգտելով աւելի շաբ օգուտ սրանութ, շաքարի, թէյի, ալիւրի և այլ մթերքների մէջ վնասակար կամ անվնաս նիւթեր են խառնում և ապա ծախում։

Մեզանում կայ մի հանգամանք ևս որ պահանջում է անսպառնառ հասարակական խանութներ հիմնել. դա գիւղերի անջափակած լինելը, քաղաքներից հեռու գրնելն է։ Եւ գիւղացին կամ գիւղում ապրող ժամանակաւոր հիւրը սրիպւած է լինում մի որ և է կարմոր մթերքի համար կամ քաղցաք գնալ և կամ գիւղի խանութպանից անասելի գներով ամրանք գնել։ Խանութպանը լաւ հասկանալով իր և գնորդների դրութիւնը, կորակի կերպով առաջարկում է իր քէֆին գուած գինը, և գնողը որ զեշուզէ, պիփի համաձայնէն րա հետո Գիւղական խանութպանների կեղեքիչ դերը ի միջի այլոց և դրանից է իր սկիզբն առնում։<sup>4)</sup>

Ահա զիսաւորապէս այն պատճառները, որոնցից ծնունդ են առել հասարակական խանութներ։ Այժմ անցնեմ դոցա համառօպ պարմութեանը խանութպանների պահանջման դժուարացնելու պահանջման ամեն պահանջման ամեն։

<sup>4)</sup> Արասդանում միւերկու փորձեր եղած են հասարակական խանութներ պահելու գիւղերում. անցեալ դարի դոցանից մէկը փակւեց կրած վնասների պատճառով. բայց այս չի հասարակական խանութների անգործնական լինելու ապացուց լինել Ծան. իմբ.

Մթերքների բարձր գները զգալի ծանրութիւն են հանդիսանում բանոր յասակարգի համար։ Այդ պատճառով զարմանալի չէ, որ հասարակական խանութների օրբանը բանտօրական միջաւացքն է եղել Բանտօրները հասարակական խանութների միջոցով ձգիվելիս են եղել բարելաւել իրանց տնտեսական դրսւթիւնը՝ անհրաժեշտ մթերքների գները էժանացնելով։

Սպառող ընկերութիւնների հայրենիքը Անգլիան է։ Դոցապատմութիւնը սկսւում է 1844 թւականից։ Նոցանից առաջինը, որ մեծ հաջակ է սպացել և հանդիսացել է որպէս օրինակ այլ ընկերութիւնների ծագման, Ռոչդելեան ընկերութիւնն է։ Այդ ընկերութիւնը հիմնել են Մանչեստրի մօտ գյուղոյ Ռոչդել քաղաքի բանտօրները։ Բանը այսպէս էր եղել. Փլանելի արդիւնաբերութիւնը, որ ծաղկած էր Ռոչդելում, 1843 թւականին ենթարկեց մեծ կրիզիսի։ Բանտօրական վճարը իջաւ, աշխատանքի պայմանները վաֆթարացան, բանտօրները չղիպէին ինչ անել և նրանց դրութիւնը ուղղակի անրանելի էր դարձել։ Այդ հանգամանքներում բանտօրների մի փոքրիկ խումբ վճռեց մի թեթև գումար կազմել, որպէս զի դորա միջոցներով կարելի լինէր օգնել ամենաշաղագ բանտօրներին։ Այդ սպառակով նոքա մի կասա հիմնեցին և իւրաքանչիւր բանտօր շաբաթական 8 կոպէկ էր մագնում այդ կասան։ Մի անգամ երեկոյեան բանտօրները ժողովուել էին և երկար ժամանակ խօսում էին իրանց անելանելի դրութեան մասին։ Այդ դրութիւնը բարւոքելու համար շատ միջոցներ էին առաջարկում, սակայն դոցանից ոչ մեկը գործնական բնաւորութիւն չէր կրում։ Երկար խորհրդակցելուց յետոյ բանտօրները վճռեցին մի պատճամաւորութիւն ուղարկել գործարանարէրերին և խնդրել, որ նոքա աւելացնեն բանտօրական վարձը և բարելաւեն նոցա դրութիւնը։ Միայն մի քանի գործարանարէրեր համաձայնեցին կապարել այդ խնդիրը, մնացածները պատասխանեցին, թէ նրանք աւելի լարմար են դափում փակել իրանց գործարանները քան աւելացնել ուղարձնանկների օրտվարձը։ Բանտօրները մնացած էին, թէ արդեօք իրանք չեն կարող սեփական գործարան բացանել։ Այդ միտքը քաջալերում էր շատերին՝ շարունակելու 8 կոպէկանոց վճարները. սակայն աւելի զգասոր և փորձաւած ոնդայնանկներ սեփական

գործարան ունենալու գաղափարը մի երազ էին համարում, աչքի  
առաջ ունենալով 8 կոպէներից կազմող գումարի դանդաղ աճումը  
Այդ կարելի էր իրազործել միայն շաբ և շաբ հեռու ապագայում,  
բայց ալքապութիւնը օրեր չէ սպասում, ուր մնաց տարիներ...  
Յուսահագութիւնը կամաց-կամաց տիրապետում էր բոլորին Զայ-  
ներ էին լսում թէ ժողոված գումարը հարկաւոր է բաժանել ըն-  
կերների մէջ, որպէս զի հնարաւոր լինի գոնէ առժամանակ կառա-  
վարւել մի կերպ, մինչև որ իրերի դրութիւնը կը փոխւէր: Զէ որ  
իրաքանչիւր անդամ մի բան էլ է կը սփանար կասայից: Բարե-  
բախուաբար այդ առաջարկութիւնը շանցաւ: Սեփական գործարան  
ունենալու դրենը այնուամենայնիւ գրաւիչ էր: Բանւորները  
մրածում էին, թէ արդեօք նրանք ինչպէս փող գտնեն այդ  
նպագուակի համար: Պարոք վերցնել—պակայն ով նրանց պարոք կը  
դար: Բացի դրանից, այդ դէպքում՝ անզամ նրանց դրութեան բարե-  
լաւութիւնը դարձեալ հեռու ապագային էր մնում, այն ինչ ներ-  
կան պահանջում էր այնպիսի միջոց, որ կարճ ժամանակում կա-  
րողանար բաւոքել նոցա վիճակը: Օրավարձի բարձրացնելը նոյն  
իսկ բանւորական շարժումով անհնարին էր: Խոչ էր մնում անելու:  
Միթէ իսկապէս նրանց վիճակւած էր միշտ վար կերպուել և  
և վար հագնւել:

Եւ բնակսնաբար նրանց գլխում ծագեց հետեւեալ միոքը: Եթէ  
չէ կարելի ալելացնել աշխատանքի վարօն, արդեօք հնարաւոր  
չէ իշնցնել մթերքների զները և այդպիսով նոյն վարձով սրա-  
նալ աւելի շար մթերքներ, ուրեմն և լաւ կերպուել ու հագնւել  
իսկ դա միեւնոյն էր, թէ արդեօք ձեռնպու չէ սեփական խանութ  
բացանել: Խանութը, մրածում էին նրանք, մեզ օգուտ կը դայ,  
որով կարելի կը լինի սեփական գործարան հիմնել: Այդ միոքը, որ  
բարւոք վիճակ էր խոսգանում, բանւորների մէջ մեծ հաւանու-  
թիւն գրաւ: Այդ նպագուակով նրանք հիմնեցին 40 հոգուց բաշկա-  
ցած մի ընկերութիւն: Անդամակցական վճարը 8 կոպէկից բարձ-  
րացրին 12-իւ Ընդրեցին երեք հոգի, որոնք իւրաքանչիւր կիւրակի  
անդամների մօտ պիտի գնային և ժողովէին վճարները: Գործի զեկը  
դրնուում էր եռանդուն և ազնիւ մարդկանց ձեռքում և սոքա մի  
առանձին ոգևորութեամբ ու հաւագուվ էին աշխագում:

Այդպիսով բանտորները ժողովեցին մինչև 280 ո. և ահա այդ փոքրիկ գումարով նոքա պիտի բացանէին իրանց խանութը, նոքա վարձեցին խանութ, գնեցին ապրանք և 1844 թւականի Դեկտեմբերի 21-ին երեկոյեան պիտի բացէին խանութը: Վերջինս դուշում էր մի յետ ընկած փողոցում: Ամբոխը կանգնած ռպասում էր դռների բացման: Ռատայնանկները կանգնած էին դլուխները կախ, դեմքները մռայլ և վիճում էին այն մասին, թէ արդեօք ովզ ջոշալ կը լինի խանութի պատուհանի դռնակները յետ դանելու և հասարակութեանը խանութի ապրանքների սուղ պաշարը ցոյց դա. լու: Եւ խկապէս այդ գործը կատարելու համար դանջւողներ, ամաչողներ կային: Վերջապէս գտնեց մի քաջը, որ արագութեամբ պատուհաններին մօտ վազեց և բացաւ դռնակները: Ամբոխը քըրքը ջայցաց: Այդպէս սկսեց հասարակական խանութների գործը, որ յերոյ գարածւց ամբողջ աշխարհում:

Խանութի գործը սկսեց արագութեամբ առաջ գնալ: Դրան նպաստում էին թէ անդամների ընդհանուր ոգևորութիւնն ու անձնուեր գործունելութիւնը և թէ այն հիմնական կանոնները, որոնք մինչև այժմ էլ առաջարկում են ամեն մի նոր բացող հասարակական խանութի համար: Այդ հիմնական կանոնները, որ առաջ դորժադրւած է Ռուշել քաղաքում, յայտնի են Ռուշելեան սիստեմ անունով: Դոքա հեղուեալն են. 1) Ապրանքը խանութում ծախում է առձնուն դրամով: Ապառիկ ծախելը շատ վասնգաւոր է. այս հանգամանքը յանախ շատ ընկերութիւնների կորսուեան պարհառ է դարձել, և այնքեղ, ուր անհրաժեշտ է ապառիկ առևտուր անելը, պիտի սահմանափակ շրջանների մէջ դնել: 2) Ապրանքը ծախում է շուկայի չափաւոր գներով: Սա ունի իր առաւելութիւնները. ա) այդ կանոնը պարմատում է խանութին աւելի կայունութիւն և բ) մասնաւոր մթերավաճառների մէջ խիստ թշնամութիւն չէ յառաջացնում; որ գոյութիւն կունենար, եթէ շուկայի գներից պակաս գներով ծախւէր ապրանքը: 3) Զուր աշխարհանքը բաժանում են ոչ թէ իւրաքանչիւր անդամի դրած կապիտալի համեմափ, այլ կապիտալին հասնելիք դոկտուր եկած, ֆնացածը բաժանում են համեմատութեամբ թէ ովզ որքանի մթերք է գնել խանութից: Այդ սիստեմը, այսինքն դիւիդենդի բաժանելը իւ-

բաքանչիւր անդամի սպառման համեմագ և միևնոյն ժամանակ՝  
մթեղքների գների որոշելը համաձայն շուկայի գների՝ միջոց է  
գոալիս ամենքին խնայողութիւն անել սև օրւայ համար կան  
սպառողների ընկերութիւններ, որոնք բացառապէս հողում  
են միայն էժան ապրանք մատակարարելու իրանց անդամներին  
և այդ նպառակով նրանք ապրանքը ծախում են համարեա նոյն  
գնով, ինչ գնով որ առել են: Գների վրայ աւելացնում են  
աջնքան, որ կարելի լինի խանութի ծախքերը ծածկելու Պարզ է,  
որ այդ միջոցով անկարելի է խնայողութիւն անել: Այն ինչ ոռո-  
շելեան սիստեմով իւրաքանչիւր անդամ կարող է մի քանի տարուց  
յեփոյ որոշ գումարի տէր դաւնալ: Նա միայն հասարակական խա-  
նութից պիտի առևելուր անեւ: Եւ խսիապէս այն խանութը, որէ  
մասին պատմում ենք, հնարաւորութիւն ունեց իւր անդամներից  
ոմանց կիրել բաւականաչափ գումար: Օրինակ մէկը 5—6 տարուց  
յեփոյ արդէն ունէր 230 ռ., որ գոյացել էր նրան համելիք գու-  
մարից. մի կին խնայել էր մինչեւ 380 ռ. և այն: Խոչդելեան լո-  
կերութիւնը աճում էր շատ արագ և սկսելով իր գործունէութիւնը  
280 ռուբլով, 1891 թւականին. (47 Փարւայ ընթացքում) ունէր  
արդէն  $3\frac{1}{2}$  միլիօն ռուբլի, իսկ զուտ արդիւնք 1,5 միլիօն ռուբլի  
իւր գոյացեան ընթացքում ոռչելեան ընկերութիւնը իր ան-  
դամներին 12 միլիօն ռ. օգուտ է ուելը Ընկերութիւնը հետեւում  
է և այլ նպարակների. լիշենք, որ լուսաւորութեան գործի համար  
(ուսումնարաններ պահել, գրադարան, ընթերցարան, դասսախոսու-  
թիւններ կազմակերպել և այլն) մինչեւ 1887 թւականը ընկերու-  
թիւնը ծախսել է մոտ 200.000 ռուբլի Խոչդելցիք հետեւում են  
և բարեգործական նպարակների. իրանց հիւանդ անդամները բժշ-  
կում են ձրի, իսկ մեռելները նոյնպէս ձրի են թալլում: Բացի այդ,  
ինչպէս վորը ինչ առաջ ասացի, նրանք շատ են գնահատում ու-  
սումն ու կրթութիւնը և ահա այդ նպարակով իրանց զուտ օգ-  
տից  $2,5^0/0$  նւելիրում: Են ուսումնական կրթական գործի: Ընկերու-  
թիւնը ունի մի ուսումնարան, որտեղ սովորում են մինչեւ 450 աշա-  
կերպներ. ունէ մի զրադարան, որտեղ 17 հազար զիբք կայ. մի  
ընթերցարան—մի ընդարձակ և 19 հատ փոքրիկ դահլիճներով:  
Նոյն նպարակով սուշելցիք երեկոյթներ, ներկայացումներ և զբո-

սանքներ են սարքում, հիմում են գանազան կուրսեր (մաթեմատիկայի, քիմիայի, ֆիզիկայի, վիզոլոգիայի և այլն) և առ այդ հրապերում են գանազան մասնագետներ։ 1893 թւականին ընկերութիւնը հիմնեց մի շարժական կաթնարարեսական ուսումնարան՝ խցի արդիւնագործութիւնը սովորեցնելու համար։ Վերջերում հիմնեցին նոյն իսկ վելանելի սեփական գործարան և այդպիսով հասան իրանց մուրագին։

Որոշելեան ընկերութեան յաջողութիւնը մի փայլուն օրինակ էր նորանոր սպառող ընկերութիւնների ծագման համար։ Եւ խկապէս 1892 թ. Մեծ Բրիտանիայում նոյց թիւ լ հասնում էր 1500-ի։ Ազգաբնակութեան 20, 9<sup>0</sup>/0-ը մասնակցում էր այդ ընկերութիւններին։ Անգլիայի սպառողների ընկերութիւններին մէջ այժմ դըրւած է 115 միլիոն ռուբլի։ 1891 թիւն բոլոր խանութներից 315 միլիոնի ասլրանք է ծախւած և զուր օգուր վերցւած է 43 միլիոն ռուբլի։ Եւ այդ բոլոր յաջողութիւնը ձեռք է բերւած 50 տարւաց ընթացքում։

Սպառողների ընկերութիւնների զարգացման նպաստում է և այն հանգամանքը, թէ որքան ձեռնորու պայմաններով են ձեռք բերում ասլրանքները։ Վերջիններս ընկերութեան համար վաճառականական գետակիցից լաւ գնելու համար բաւական չէ գնողի ազնութիւնը, այլ և պէտք է բազմակողմանի գրեղեկութիւններ ունենալ շուկայի դրութեան և ընդհանրապէս ասլրանքների մասին։ Մի խօսքով առևտրական փորձնականութիւն և հմբութիւն ևս հարկաւոր է։ Այդ նպատակով իւրաքանչիւր խանութ ունենում է ասլրանքներ ճանաչող մարդիկ, որոնց ծառայութիւնից և օգուրում է։ Մի ընկերութեան համար ծանր կը լինէր այդպիսի մարդիկ պահել, բայց հասարակական խանութների դաշնակցութիւնը կարող է վարձատրել այդպիսի ծառայողների։ Վերջիններիս դերը նշանաւոր է։ Դոցա կարելի է երաշխաւոր համարել լաւ որակի ասլրանք սրանալու համար, այդպիսի մարդկանց ծառայութիւնից օգուելու համար սպառողների ընկերութիւնները պիտի դաշն կապեն և միասին նոյցա միջոցով մեծ քանակութեամբ ասլրանք գնեն։ Այդ պիտով ամեն մի ընկերութեան մնում է միայն պարւերներ անել, ասլրանք գնելու պարասխանագութիւնը իրանցից դէն ձգելով։

Վաճառելը միայն մնում է խանութներին։ Եւ Անգլիայում այս բանը շուպի հասկացան։ Արդէն 1863 և 1868 թւականերին հիմնեցան այդ քեսակ ընկերութիւններ, որոնք միանգամից մեծ քանակութեամբ աղրանք էին գնում և կարարում սպառալների ընկերութիւնների պատէրները։ Վերջինները լինում էին առաջնների անդամները, մրցնում էին որոշ գումար (համեմատ իրանց անդամների թւին) և նոցանից սրանում կարեւոր մթերքներ։

Սպառողների ընկերութիւնները ունին և ընդհանուր կօսպերադիւ դաշնակցութիւն, որի նպագակն է բարոյական կապ հասպարել բոլոր սպառող ընկերութիւնների մէջ և փոխադարձ խորհուրդներ ու օգնութիւններ հասցնել միմեանց։ Սակայն դրանով դեռ չէ վերջանում սպառող-ընկերութիւնների ամբողջ կազմակերպութիւնը։ Ամեն քարի Հոգեգալստրեան կայանում է բոլոր ընկերութիւնների ներկայացուցիչների համագումար ժողովը, ուր վեշի է ունենում մոքերի փոխանակութիւն այդ ընկերութիւնների հոգերի և անելիքների վերաբերմաբ։ Բացի այդ, զանազան հոեփորներ ճառեր են կարդում՝ ձգտելով ամրացնել սպառող-ընկերութիւնների բարոյական կապը, անդամների վերաբերմունքը դէպի այդ հասպարութիւնները աւելի և աւելի գիտակցական դարձնելու նպակազով։

Հասարակական խանութների թիւը բազմանում է Գերմանիայում, Ֆրանսիայում, Նէցարեայում և Բելգիայում։ 1894 թւականին Գերմանիայում նոցա թիւը հասնում էր 1412.ի. Ռուսասրանում միայն վերջին ժամանակներս է սկսել այդպիսի մի շարժում։ Նաև գործարաններ և քերունական երկաթուղիների ծառայողներ հիմնել են սպառողների ընկերութիւններ։ 1893 թւին գոյութիւն ունէր 91 ընկերութիւն։ 1893 թւականին 87 ընկերութիւն ունէին 1.356.940 ռ. ընկերակցական գումար։ Օգուստ սպառաւած է 489.197 ռ., որ ասել է ամեն մի ընկերութիւն սպացել է զուր օգուստ 5.755 ռուբլի։ Ընդհանրապէս Ռուսասրանում սպառող-ընկերութիւններ դեռ շատ քիչ են քարածւած, եղածներն էլ ոչ մի կապ չունին միմեանց հեր։ Մեզ մօտ Կովկասում կան միքանի ընկերութիւններ, որոնցից ինձ յալրնի են Նօրելի և Շիրակե-

գործարանների բանւորների համար հիմնած հասարակական խանութները<sup>\*</sup>։

Այդ խանութների օգուտը դնդեսական շահերի դեսակէտից ակնյալունի է։ Մինչև այժմ մեր խօսքը բանւորների մասին էր։ Բայց մեր գլխաւոր նպատակն է հրաւերել զիւղական հասարակութիւնների ու շահրութիւնը դէպի այդ օգրակար կազմակերպութիւնը։ Ամեն մի զիւղական հասարակութիւն առանձին կամ միացած ոլժերով պիտի ձգտի ազարւել զիւղական կեղքիչ մանրավաճառների ձեռքից, հասարակական խանութներ հիմնելով։ Այդպիսով նոքախանութանի խլածը իրանք կը արանան և, բացի այդ, կունենան լաւ որակի մթերբներ։ Եռոչդելեան ընկերութեան համառօր պարմութիւնը մի պարունակեր է, որ ցոյց է դալիս այդ հիմնարկութեան օգրակարութիւնը՝ դնդեսական դեսակէտից։ Եթէ այդ ընկերութիւնները մեզանում անզիւդական ընկերութիւնների յաջողութիւնը չունենան, դոնէ որոշ չափով կը թեթևացնեն մեր զիւղական դարրի դնդեսական դրութիւնը։ Մեր զիւղական աշխարհով հետաքրքրութների հոգոն ու մրածմունքը զիւաւորապէս պիտի ուղարկ դէպի այն հողմը, թէ ինչ միջոցներով կարելի է զարկ դալ զիւղացոց դնդեսական զարդացման։

Հասարակական խանութները հիմնելը այդ միջոցներից մինն է։ Ենում է ցանկալ, որ մեր այս առաջարկութիւնը արձագանք գտնէ շատ զիւղերում և որ այս խնդրի վերաբերեալ մասնադիր մարդիկ մասրուլի մէջ հանդէս դացին իրանց խորհուրդներով և խնդրի բազմակողմանի ուսումնասիրութեամբ։ Սորա վերաբերեալ մենք չունինք ոչ թէ մարտչելի այլ նոյն իսկ անմարչելի գրականութիւն։ Հարկաւոր են զբացչներ, ձեռնարկներ, որոնք գրւղացուն և բանւորին բացարկեն թէ ինչումն է կայանում սպառողների ընկերութիւնների էութիւնը, նպատակը և այն<sup>1</sup>։

\* Այդ կարգի ամենախոշոր ընկերութիւնը Կոմիսառում պիտի համարել օֆիցիերական ընկերութիւնը, որի կենտրոնը Թիֆլիսն է, Ծան. խմբ։

<sup>1</sup>) Յիշենք որ Մերի զիւղի հասարակութիւնը վճռել է հասարակական խանութ բանալ և խնդրութիւնը հաւանութիւն է գորել սահանգապետի մօր։

Ցանկալի է որ Հրատ. ընկ. հրատարակէր սպառուների ընկերութիւնների նորմալ կանոնադրութիւնը (Կօրմալեալ ստատուտ), որ արդէն հասրատւած է բարձրագուն իշխանութիւնից և հրատարակած։

Ներկաւ լուսածի համար օժանդակ է ծառակել 0գերով'ի Կո տաօ պուրակ պատճեան առաջարկը։